# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ, 1 շենք,Հեռ. (+374 223) 2 36 63, 2 37 13, էլ.փոստ kotayk@mta.gov.am

**11.02.2025թ. № 01/05/01123-2025**
**Ի կատարումն ՀՀ ՏԿԵ նախարարի՝ 06.02.2025թ.**
**№ Դխ/14.2/3967-2025 հանձնարարականի**

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Հարգելի գործընկեր

Կից ներկայացվում է ՀՀ համայնքների համար Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից մեկնարկած Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում հայտարարված դրամաշնորհային մրցույթի փաթեթը: Դրամաշնորհի շրջանակներում ֆինանսավորվող ուղղություններն են.

- Վերականգնվող էներգիա և էներգաարդյունավետություն,
- Համայնքային ծառայություններ,
- Տեղական տնտեսական զարգացում,
- Կանանց հզորացում և ներառականություն:

Առաջարկվում է հաշվի առնել, որ **«Վերականգնվող էներգիա և էներգաարդյունավետություն»** ուղղվածության ծրագրերի ֆինանսավորման համար կարող են դիմել **միայն Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերի համայնքները**, իսկ մյուս երեք ուղղվածություններով՝ կարող են դիմել բոլոր մարզերի համայնքները:

Անհրաժեշտ է ուսումնասիրել և անպայման ներկայացնել դրամաշնորհային հայտեր:

Հարցերի դեպքում կարող են կապ հաստատել ԳՄՀԸ պատասխանատուների հետ՝ LDF-Armenia@giz.de էլ. փոստի հասցեով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցութային գործընթացներին առնչվող մանրամասների քննարկման նպատակով նախատեսվում է համայնքների համար կազմակերպել տեղեկատվական հանդիպումներ, որոնց վերաբերյալ կներկայացվի լրացուցիչ տեղեկատվություն (ձևաչափ, օր, ժամ և այլն):

Առդիր՝ 1 խտանիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ Հարություն Ալեքսանյան, հեռ. (0223) 2-73-01
Կատարող՝ Սամվել Սահակյան, հեռ. (0223) 2-34-13